

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿԳՄՄՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝	ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ ՓՈԽՆԵՐԳՈՐԾՈՒՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՍԲ
ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐ՝	ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝	Հասմիկ Բեյբուրյան
ՈՒՍՈՒՑԻՉ՝	Արմինե Սաֆարյան
ԴՊՐՈՑ՝	ԳԵՂԶՈՎԻՏԻ ԹԻՎ 2 ՄԻԶՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

2022 թ.

ՄԱՐՏՈՒՆԻ
Բովանդակություն

Ներածություն-----	3
Սովորողների առաջադիմության բարձրացումը փոխներգործուն մեթոդների կիրառմամբ-----	4 -15
Փորձարարական դասեր-----	15
Փորձարարական դաս 1-----	15
Փորձարարական դաս 2-----	15-
16	
Եզրակացություն-----	17
Գրականության Ցանկ-----	18
Հավելվածներ-----	19
Դասապլան 1-----	19
Դասապլան 2-----	21

Ներածություն

Արդի տեղեկատվական դարաշրջանում անհրաժեշտ է աշխատել այնպիսի պայմաններում, երբ սովորողի կողմից գիտելիքներն արագ են հնանում քան հասցնում են յուրացվել, այդ պատճառով անհրաժեշտ են ուսուցման նոր մեթոդներ ստեղծագործ անհատի պատրաստման համար, որոնք պետք է անընդհատ զարգանան և ինքնակատարելագործվեն: Ուսուցչի նպատակը սովորողի անհատական գործունեության զարգացումն է: Այդ պատճառով ուսումն այնպես պետք է կազմակերպել, որ յուրաքանչյուր երեխա հնարավորություն ունենա զարգանալ և բացահայտվել որպես ստեղծագործ անհատ: Այս ամենը պահանջում է ժամանակակից մոտեցում ուսումնական գործունեության կազմակերպման մեջ, որոնք իրենց հերթին պահանջում են աշխատանքի նոր ձևերի և մեթոդների որոնմանը: Կիսուենք ուսուցման փոխներգործուն մեթոդների կիրառման մասին, երբ աշակերտն ունի ընտրության հնարավորություն և կարող է օգտագործել սեփական նախաձեռնությունը: Այս մեթոդի առանձնահատկությունն ուսուցման գործընթացի ակտիվացումն է, ինչպես նաև ուսուցանող միջավայրի ստեղծումը, որում սովորողը դառնում է, իր իսկ ուսուցումը կազմակերպող անձ: Փոխներգործուն մեթոդն ենթադրում է ուսուցման գործընթացում ստեղծագործական առաջադրանքների առկայություն, պարտադիր շփում աշակերտ-ուսուցիչ համակարգում: Այս մեթոդը նպատակ ունի ձևավորել ուսուցման այնպիսի պայմաններ, որոնցում բոլոր սովորողները ակտիվորեն փոխգործակցում են: Փոխներգործուն ուսուցման հիմնական նպատակը աշակերտի անձի ամբողջական զարգացումն է, իսկ միջոցը՝ իմացական և մտավոր ինքնուրույն գործունեությունն է: Փոխներգործուն մեթոդները բազմազան են՝ աշխատանք փոքր խմբերում՝ զույգերով, փոխատեղվող եռյակներով, կարուսելի, դաս-սեմինարների (մտքերի փոխանակություն, բանավեճ), գործարար խաղերի, համագործակցային կամ նախագծերի մեթոդ և այլն: Ուսուցիչը յուրաքանչյուր դասը պետք է դարձնի հետաքրքիր, գրավիչ, որպեսզի զարգացնի ճանաչողական հետաքրքրությունը, սովորողներին մղի գործուն մասնակցության:

Սովորողների առաջադիմության բարձրացումը փոխներգործուն մեթոդների կիրառմամբ

Ուսուցման ընթացքում ակտիվ միջավայր ապահովող մեթոդներն ընդունված է անվանել փոխներգործուն կամ ինտերակտիվ մեթոդներ: Փոխներգործուն մեթոդներով ուսուցումը հնարավորություն է տալիս դասապրոցեսի ընթացքում մասնակցելու ողջ դասարանին, ուսուցչի կողմից չի մատուցվում պատրաստի գիտելիքները, այլ հնարավորություն է տրվում աշակերտներին ակտիվացնել իրենց գիտելիքները, հիշողությունը, ինչպես նաև պրակտիկ գործունեության ընթացքում ձեռք բերել նորանոր գիտելիքներ և հմտություններ: Փոխներգործուն մեթոդները պետք է կիրառվեն ուսուցման գործընթացի այն հատվածում, երբ անհրաժեշտ է զարգացնել աշակերտի մտածողությունը, ճանաչողական ակտիվությունը , հաղորդակցական կարողությունը:

Փոխներգործուն ուսուցման սկզբունքներն են.

1. Փոխներգործություն, փոխուսուցում
2. Սովորողի ակտիվություն
3. Համագործակցություն
4. Ինքնաարտահայտման խրախուսում
5. Հետադարձ կապի ապահովում և այլն:

Փոխներգործուն մեթոդների հիմքում ընկած է երկխոսությունը, ինչպես ուսուցչի և աշակերտների միջև, այնպես էլ իրենց՝ աշակերտների միջև: Երկխոսության ընթացքում զարգանում է հաղորդակցման հմտությունները, խնդիրները միասին լուծելու կարողությունները:

Փոխներգործուն մեթոդի առանձնահատկություններն են.

- աշակերտը նյութը սովորում է ինչ-որ բան կատարելով, մասնակցելով որոշակի գործընթացի
- աշակերտը հենվում է ոչ այնքան իր հիշողությանը, այլ ինքնուրույն, ստորդագործական, քննադատական մտածողությանը
- աշակերտի համար հնարավորություն է ստեղծվում ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքի համար

- աշակերտը ձեռք է բերում համագործակցային կարողություններ, սոցալական փոխազդեցության, հաղորդակցական կարողություններ
- նյութը յուրացման ընթացքում աշակերտը հնարավորություն է ստանում ի մի բերել, ամփոփել, ակտիվացնել և կիրառել սովորածը
- ստեղծվում է ինքնակրթության միջավայր:

Մեթոդներ, որոնք հարմար են կիրառել դասի խթանման փուլում.

- Մտազրոհ
- Խմբավորում
- Պրիզմա
- Մտածիր, զույգ կազմիր, քննարկիր
- Գուս /գիտեմ, ուզում եմ սովորել, սովորել եմ/
- Դերայի խաղ

Մեթոդներ, որոնք հարմար են կիրառել դասի իմաստի ընկալման փուլում

- T-աձևով աղյուսակ
- Գաղափարների /հասկացությունների/ քարտեզագրում
- Վենի դիագրամ
- Փոխներգործուն նշանների համակարգ
- Բանավեճ
- Զրույց
- Համառոտ դասախոսություն
- Խորանարդում
- Խճանկար
- Շրջագայություն պատկերասրահում
- Երեք բանալի և մեկ կողպեք
- Կարուսել

Մեթոդներ, որոնք հարմար են կիրառել դասի կշռադատման փուլում.

- Քառաբաժան
- Խորանարդում
- Իրավիճակների վերլուծության մեթոդ
- Ուղեղային (մտային) գրոհ կամ մտքերի տարափ (բրեյնստորմինգ)¹

Ուսուցիչն ազատ է մեթոդների ընտրության հարցում,բայց այդ ընտրությունը չի կարող կրել կամայական բնույթ:Մանկավարժական գրականության մեջ առանձնացված են ուսուցման մեթոդների ընտրության վրա ազդող մի շարք գործոններ:

- Ուսման նպատակները և խնդիրները
- Բովանդակությունը
- Ուսուցման նյութի քանակն ու բարդությունը
- Մովորողների պատրաստվածության մակարդակը
- Մովորողների շահագրգռվածությունը
- Մովորողների տարիքն ու աշխատունակությունը
- Ուսումնական վարժվածությունն ու դիմացկունությունը
- Ուսումնական ժամաքանակը
- Ուսուցման նյութատեխնիկական ու կազմակերպման պայմանները
- Ուսումնական պարապմունքների տիպն ու կառուցվածքը

Ուսուցիչ-աշակերտ հարաբերությունները (ավտորիտար,համագործակցային)

- Մովորողների թվաքանակը դասարանում
- Ուսուցչի պատրաստվածության մակարդակը:

Կարող են ծագել նաև չնախատեսված կամ անսպասելի հանգամանքներ,որոնք կթելադրեն ուսուցչին փոխել նախապես ընտրված մեթոդը,ստեղծված իրավիճակը շտկելու կամ հաղթահարելու նպատակով:Բոլոր դեպքերում չկա դեպի նպատակը տանող միակ ճանապարհ,և որևէ մեթոդ, եղանակ,սկզբունք,հնար չի կարող համարվել միակ ճշմարիտը:Ավելին ,առաջարկված մեթոդների կիրառման դեպքում կարող են առաջանալ դժվարություններ,մասնավորապես ժամանակային առումով:Այդ դեպքում կարելի է կիրառել մեթոդը ոչ ամբողջությամբ,այլ դրա առանձին տարրեր կամ հարմարեցնել դասացուցակը,կազմելով կրկնակի ժամեր:Կարելի է նաև մեթոդն օգտագործել արտադասարանական և նախասիրական պարապմունքների ընթացքում,կամ կազմակերպել բաց դասեր,նկատի ունենալով նաև,որշատ մեթոդներ լուրջ նախապատրաստական աշխատանք են պահանջում:Մեթոդների,կամ մեթոդական հնարների կիրառումը չի կարող ինքննպատակ լինել:Եթե մեթոդները արդյունավետ են, բայց դրանք պարզորոշ վկայում

¹ <https://multiurok.ru/files/p-okhnergortsown-met-odner.html>

են,որ առաջադրված նպատակը տվյալ տարիքին անհամապատասխանության կամ ուսումնառության այլ պայմանների արդյունքում իրասեսական չէ,ուրեմն պետք է վերանայել նպատակը:

Հնարը սովորաբար անկախ կիրառություն ունի,բայց հաճախ բնութագրվում է որպես մեթոդի տարր,բաղադրիչ,մեթոդի իրականացման քայլ կամ արտահայտչաձև(մոդիֆիկացիա):

Ուսուցումը բաղկացած է կոնկրետ գործողություններից կախված նրանից,թե ինչ ֆունկցիա է կատարում սովորողը մանկավարժական իրավիճակում:Դրանք կարող են լինել հետևյալ ֆունկցիաները.

- Պասիվ ընկալում և ուսուցում դրսից մատուցված ինֆորմացիայի
- Ինֆորմացիայի ակտիվ պրպտում և օգտագործում
- Դրսից ուղղորդված փնտրտուքի կազմակերպում և ինֆորմացիայի օգտագործում:²

Առաջին դեպքում աշակերտին դիտարկում են որպեսզս մանկավարժի ազդեցության օբյեկտ:Այդ դեպքում ուսուցման հիմքում ընկած է լինում նրան պատրաստի ինֆորմացիա մատուցելը, այնպիսի գիտելիքների և կարողությունների ուսուցումը, ինչպիսիք են բացատրումը, ցուցադրումը և աշակերտի նկատմամբ պահանջը կոնկրետ ուսումնական ծրագրերի վերաբերյալ:

Ուսուցումը բաղկացած է այնպիսի գործողություններից,ինչպիսիք են բառացի ընկալում և կրկնություն ընկալողուկտիվ ստեղծագործություն, վարժեցում պատրաստի օրինակների կամ օրենքների հիման վրա:

Երկրորդ դեպքում աշակերտը դիտարկվում է որպես սյուբեկտ, որը կազմավորվում է իր սեփական հետաքրքրությունների ու նպատակների հիման վրա: Դա ինքնակրթության տեսակ է,երբ ուսուցումը բաղկացած է աշակերտի այնպիսի գործողություններից, ինչպիսիք են հարցերի և խնդիրների ընտրություն, ինֆորմացիայի փնտրտուք, մշակութային գործողություն, որը համապատասխանում է իր պահանջմունքներին և հետաքրքրություններին:

Երրորդ դեպքում մանկավարժը կազմակերպում է վարվելակարգը (պահանջներ,սպասելիքներ ու հնարավորություններ) այնպես,որ դրանք ³

² Ամիրջանյան Յու. Ա., Ա. Ս., Մանկավարժություն,Երևան, 2004, էջ 36.

³ Ամիրջանյան Յու. Ա., Ա. Ս., Մանկավարժություն,Երևան, 2004, էջ 80.

բավարարում են աշակերտի անհրաժեշտ հետաքրքրությունները և արդեն այդ հետաքրքրությունների հիման վրա աշակերտը իրականացնում է ակտիվ ընտրություն և անհրաժեշտ ինֆորմացիայի օգտագործում: Այստեղ ուսուցումը հանդես է գալիս որպես աշակերտի ճանաչողական ակտիվությանն ուղղված գործընթաց հիմնված մանկավարժական մեթոդների վրա, հարցերի և խնդիրների առաջադրում, վերլուծություն և քննարկում, համատեղ պլանավորում: Ուսուցումը բաղկացած է աշակերտի այնպիսի գործողություններից, ինչպիսիք են առաջադրված խնդիրների լուծում և արդյունքների գնահատական, փորձեր և սխալներ, փորձարկում, հասկացությունների ընտրություն և օգտագործում: Ուսուցման մեթոդների տակ հասկանում են համապատասխան փոխգործության միջոցներ (արդյունքներ) ուսուցչի և սովորողների միջև, ուղղված կոնկրետ նպատակներին հասնելուն:

<<Մեթոդ >> հունարեն նշանակում է ուղի դեպի որևէ բան, նպատակին հասնելու միջոց, գիտելիքներ ձեռք բերելու միջոց:³

Ուսուցման ձևը դա կազմակերպված համագործակցությունն է մանկավարժի և սովորողի միջև, որը տեղի է ունենում գիտելիք ստանալու ընթացքում: Առանձնացվում են ուսուցման հետևյալ ձևերը, ֆրոնտալ, անհատական, դմբակային, դասարանային, երեկոյան, առկա, հեռակա, ինչպես նաև այնպիսի ձևեր, ինչպիսիք են դասընթաց, էքսկուրսիա, սեմինար, լիցենզիա, գործնական աշխատանք, արտադրական պրակտիկա, քննություններ, ստուգարքներ և այլն: Գլխավորը, որը առանձնացնում է մեթոդը ձևից, դա այն է, որ մեթոդում տրված է գիտելիքների ձեռքբերման միջոց և աշակերտի կողմից մասնակցության աստիճան: Մանկավարժության մեջ չկա միաձայն կարծիք <<ուսուցման մեթոդ>> հասկացության դերի մասին: Բարանսկին գտնում է, որ ուսուցման մեթոդը պետք է համարել սովորողների և սովորեցնողների համագործակցությունը, ուղղված կրթական խնդիրների լուծմանը: Իլյինսան ուսուցման մեթոդի տակ հասկանում է սովորողների ճանաչողական գործունեության կազմակերպմանը ուղղված միջոց: Դիդակտիկայի պատմության մեջ գոյություն ունեն ուսուցման մեթոդների տարբեր որակավորումներ:

Գոյություն ունեն խոսքային, պրակտիկ և դիտարկման մեթոդներ:

Խոսքային մեթոդներ. Պատմվածք, զրույց և այլն: Գործնական մեթոդներ, վարժություններ, վարժեցումներ, ինքնակառավարում և այլն: Զննական(դիտարկման) մեթոդ իյուստրացիայի, դեմոստրացիա, նյութի ցուցադրում և այլն:

Բաբանսկին ուսուցման մեթոդների բազմազանության մեջ առանձնացնում է հետևյալ 3 խմբերը.

- Ուսուցողա-ճանաչողական գործունեության կազմակերպման և իրագործման մեթոդ
- Ուսուցողա-ճանաչողական գործունեության ոգևորման մեթոդներ

Տիրապետման ինքնատիրապետման էֆեկտիվ մեթոդներ ուսուցողա-ճանաչողական գործունեության ընթացքում:⁴

Դանիլովի, Եսիպովի որակավորումը բխում է նրանից, որ եթե ուսուցման մեթոդները հանդես են գալիս որպես միջոցներ սովորողների ուսուցման կազմակերպման համար, դիդակտիկ նպատակների հասնելու և ճանաչողական խնդիրներ լուծելու հասարակապարհական կարելի է բաժանել հատկապես խմբերի.

- Նոր գիտելիքների ձեռքբերման մեթոդներ
- Կարողությունների և պրակտիկայում գիտելիքների օգտագործման մեթոդներ
- Գիտելիքների ստուգման և գնահատման մեթոդներ

Խառնամուրի ուսուցման մեթոդները բաժանում է 5 մասի

- Ուսուցչի կողմից բանավոր գիտելիքների մատուցման մեթոդներն սովորողների ճանաչողական գործունեության ակտիվացում. Պատմվածք, բացատրություն, դասախոսություն, զրույց, ցուցադրման և իյուստրացիայի մեթոդ բանավոր խոսքի միջոցով
- Ուսումնասիրվող նյութի ամրապնդման մեթոդներ. Զրույց, աշխատանք, գրքի հետ
- Սովորողների կողմից ինքնուրույն աշխատանք նոր նյութի ամրապնդման վերաբերյալ օրինակ լաբորատոր աշխատանք
- Պրակտիկայի ընթացքում ուսումնական գործընթացի արդյունքում ձեռքբերված գիտելիքների կիրառման մեթոդներ օր. վարժություններ:


Ուսուցման մոդելների շարքում առանձնացվում են երեքը. պասիվ(էքստրակտիվ ռեժիմ), ակտիվ(ինտրաակտիվ ռեժիմ), փոխգործուն(ինտերակտիվ ռեժիմ):

⁴ Բաբանսկի Յու. Կ., Մանկավարժություն, 1-ին, 2-րդ մաս, 1976 թ., էջ 79

Պասիվ մոդելի առանձնահատկությունը ուսուցանող միջավայրի ակտիվությունն է: Դանշանակում է, որ աշակերտը յուրացնում է նյութը ուսուցչի խոսքից կամ դասագրքի տեքստից, չեն շփվում միմյանց հետ և չեն կատարում ոչ մի ստեղծագործական առաջադրանք: Այսպիսի մոդելի օրինակներ են դասերի ավանդական ձևերը:

Պասիվ դասերում ուսուցչի և սովորողների միջև կապն իրականացվում է հարցումների, ինքնուրույն և ստուգողական աշխատանքների, թեստերի միջոցով:

Արդի մանկավարժական տեխնոլոգիաների սովորողների կողմից ուսումնական նյութի յուրացման արդյունավետության տեսանկյունից պասիվ մեթոդը համարվում է ամենաարդյունավետը: Չնայած դրան, մեթոդն ունի նաև որոշ դրական կողմեր, ուսուցիչը հեշտությամբ պատրաստվում է դասին, դասի սահմանափակ ժամանակային պայմաններում նա հնարավորություն է ստանում համեմատաբար մեծ ծավալի ուսումնական նյութ մատուցել սովորողներին: Այս դրական կողմերը հաշվի առնելով, շատ ուսուցիչներ գերադասում են պասիվ մեթոդը մնացյալ մեթոդներից: Պետք է ասել, որ որոշ դեպքերում այս մոտեցումը հաջողությամբ աշխատեցնում են փորձված մանկավարժները, հատկապես, եթե սովորողներն ունեն առարկայի հիմնավոր ուսումնասիրմանն ուղղված հատուկ նպատակներ:




Ակտիվ մոդելը խթանում է սովորողների իմացական գործունեությունը և ինքնուրույնությունը: Այս մոդելն իբրև նախապայման ունի ստեղծագործական

առաջադրանքների(ավելի հաճախ տնային) առկայությունը և պարտադիր շփումը աշակերտ-ուսուցիչ համակարգում: Այս մոդելի թերությունն այն է, որ սովորողները հանդես են գալիս որպես ուսուցման օբյեկտ միայն իրենց համար և կրթական գործընթացում փոխգործակցում են լոկ ուսուցչի հետ: Այսպիսով, այս մոդելին բնորոշ է միակողմանի ուղղվածությունը, այսինքն,միայն ինքնուրույն գործունեություն, ինքնուսուցման, ինքնադաստիարակության, ինքնքարգացման տեխնոլոգիաներ: Ակտիվ մեթոդը ուսուցչի ու սովորողների փոխազդեցության մի ձև է, որի դեպքում ուսուցիչն ու սովորողները փոխազդում են միմյանց հետ և աշակերտներն այստեղ ոչ թե պասիվ ունկնդիր են,այլ ուսուցման պրոցեսի ակտիվ մասնակիցներ: Եթե պասիվ պրոցեսում հիմանական գործող անձն ուսուցիչն է, ապա այստեղ թե ուսուցիչը ,թե սովորողը հավասար իրավունք ունեն:

Փոփոքագործուն մոդելն իր առջև նպատակ է դնում կազմակերպել ուսուցման այնպիսի պայմաններ, որոնց առկայությամբ բոլոր սովորողները ակտիվորեն փոխգործակցում են: Որոշակի խառնաշփոթ է ստեղծված, այսպես կոչված « ուսուցման փոփոքագործուն մեթոդ» հասկացության առիթով: Այս մեթոդի անվանման հիմքը անգլերեն interaction` փոխազդեցություն բառն է: Սկզբնական շրջանում այսպես էր անվանվում ուսումնական պարապմունների մի որոշակի տարբերակ, որն աշակերտներին միմյանց հետ հաղորդակցվելու, ուսումնասիրվող հարցը համատեղ քննարկելու, բանավիճային իրադրություններում ակտիվ մասնակցելու և սվյալ հարցի վերաբերյալ սեփական պատկերացումները ձևավորելու բարենպաստ հնարավորություններ էր տալիս: Հետագայում ավելի տարածվեց «փոփոքագործուն մեթոդներ» բառակապակցությունը, որը ներառում էր վերոհիշյալ հնարավորություններով դրսևորվող

ուսումնական պարապմունքների կազմակերպման մի շարք համանման տարբերակներ: Ներկայումս, հատկապես Հյաստանում, ընդունված է փոխներգործուն մեթոդի տարատեսակ համարել այն տարբերակները, որոնք հիմնված են ուսումնական պարապմունքների կազմակերպման հետևյալ կառուցվածքաձևի վրա: Ի տարբերություն ակտիվ մեթոդների, փոխներգործուն մեթոդները ենթադրում են աշակերտների ավելի ընդգրկուն փոխազդեցություն ոչ միայն ուսուցչի, այլ նաև միմյանց հետ, ինչպես նաև ուսուցման գործընթացում սովորողների ակտիվության գերակայություն: Փոխներգործուն դասերում ուսուցչի դերը հանգում դասի նպատակների նվաճման սովորողների գործունեությունն ուղղորդելուն: Նա մշակում է նաև դասի պլանը:

Հետևաբար, փոխներգործուն դասերի հիմնական բաղադրատարրերը սովորողների կողմից կատարվող փոխներգործուն վարժություններն ու առաջադրանքներն են: Փոխներգործուն վարժությունների ու առաջադրանքների էական տարբերությունը սովորական առաջադրանքներից այն է, որ կատարելով դրանք, աշակերտները ոչ միայն և ոչ այնքան ամրապնդում են ուսումնասիրած ուսումնական նյութը, որքան ուսումնասիրում են նոր նյութ:



Փոխներգործուն ուսուցման կազմակերպումը ենթադրում է կենսական իրավիճակների մոդելավորում, դերային խաղերի օգտագործում, հարցերի և խնդիրների ընդհանրացնող հետևություն հանգամանքների և իրավիճակների վերլուծության հիման վրա, տեղեկատվական հոսքերի ներթափանցում գիտակցության մեջ, որը դրդում է ակտիվ գործունեության: Այդ իսկ

պատճառով դասի կառուցվածքի մեջ ներառվում են ուսուցման փոխներգործուն մոդելի միայն տարրեր, փոխներգործուն տեխնոլոգիաներ, այսինքն կոնկրետ ձևեր և մեթոդներ որոնք թույլ են տալիս դասը դարձնել ավելի հազեցած և հետաքրքիր: Չնայած կարելի է անցկացնել ամբողջապես փոխներգործուն դասեր:

Փոխներգործուն են այն տեխնոլոգիաները, որոնց կիրառման ժամանակ սովորողը ուսուցանող համակարգում հանդես է գալիս մշտապես փոփոխվող այուբեկտիվ-օբյեկտիվ հարաբերություններում, պարբերաբար դառնալով նրաինքնավար ակտիվ տարրը:

Քննարկենք փոխներգործուն տեխնոլոգիաների կազմակերպման առանձնահատկությունները, նրանց կոնցեպտուալ դիրքորոշումը և նպատակային կողմնորոշումները:

Փոխներգործուն մեթոդների դասակարգման բնութագրիչներն են՝

- Իմաստասիրական հիմքը՝ հումանիստական, նպատակահարմար:
- Մեթոդաբանական մոտեցումը՝ հաղորդակցական
- Ջարգացման առաջատար գործոնները՝ սոցիոծին:
- Ուսումնա-դաստիարակչական գործընթացի կառավարման տեսակը՝ ուղեկցում:
- Ուսումնա-դաստիարակչական գործընթացի կառավարման տիպը՝ փոխուսուցում:
- Գերակշռող մեթոդները՝ տրամախոսական:
- Կազմակերպչական ձևերը՝ ցանկացած:

Փոխներգործուն տեխնոլոգիաներում ուսուցչի կարևորագույն խնդիրը ֆասիլիտացիան է(աջակցություն, դյուրացում)՝ ուղղորդումը և օգնությունը տեղեկությունների փոխանակման գործընթացին՝

- Տեսակետների բազմազանության բացահայտում
- մասնակիցների անձնական փորձի օգտագործում
- սովորողների ակտիվության աջակցում
- տեսության և պրակտիկայի միավորում
- մասնակիցների փորձի փոխհարստացում
- մասնակիցների ընկալման յուրացման, փոխըմբռնման դյուրացում
- մասնակիցների ստեղծագործականության խրախուսում:

Ինֆորմացիան պետք է յուրացվի ակտիվ ռեժիմով, հիմնախնդիրային իրավիճակների, փոխներգործուն ցիկլերի օգտագործմամբ: Փոխներգործուն շփումը նպաստում է մտավոր զարգացմանը: Հետադարձ կապի առկայությամբ տեղեկատվություն ուղարկողը

նստացողը փոխվում են հաղորդակցական դերերով: Սկզբնական ստացողը դառնում է ուղարկող և անցնում է տեղեկատվության փոխանակման գործընթացի բոլոր փուլերը սկզբնական ուղարկողին իր արձագանքը հաղորդելու համար: Հետագարձ կապը կարող է նպաստել տեղեկատվության (ուսումնական, դաստիարակչական, կառավարչական) փոխանակման արդյունավետության զգալի բարձրացմանը: Տեղեկությունների երկկողմանի փոխանակումը, չնայած ընթանում է ավելի դանդաղ, բայց ավելի ճշգրիտ է և բարձրացնում է վստահությունը նրա մեկնաբանման ճշտության հարցում: Հետագարձ կապը մեծացնում է տեղեկությունների արդյունավետ փոխանակման հնարավորությունները՝ թույլ տալով կողմերին վերացնել խոչընդոտները: Գիտելիքների ստուգում վրա:ը պետք է կարևորի ստացած գիտելիքները գործնականում կիրառելու հմտությունը: Փոխներգործուն տեխնոլոգիաները հիմնված են ուսումնական շրջապատի հետ սովորողների ուղղակի փոխազդեցության վրա: Ուսումնական շրձապատը հանդես է գալիս որպես իրականություն, որում սովորողն իր համար գտնում է յուրացվող փորձի ոլորտ: Սովորողի փորձը ուսումնական իմացման գլխավոր ակտիվացնողն է: Ավանդական ուսուցման ժամանակ ուսուցիչը խաղում է ուսումնական տեղեկությունն իր միջոցով անցկացնող գտիչի դեր, ինտերակտիվի ժամանակ՝ աշխատանքում օգնականի դեր, ով ակտիվացնում է տեղեկությունների փոխուղղված հոսքերը: Ավանդականների հետ համեմատած, ուսուցման փոխներգործուն մոդելներում փոխվում է նաև փոխգործակցությունն ուսուցչի հետ. նրա ակտիվությունն իր տեղն է զիջում սովորողների ակտիվությանը, ուսուցչի խնդիրն է ստեղծել պայմաններ նրանց նախաձեռնության համար: Փոխներգործուն տեխնոլոգիաներում սովորողները հանդես են գալիս որպես լիիրավ մասնակիցներ, նրանց փորձը պակաս կարևոր չէ ուսուցչի փորձից: Վերջինս ոչ այնքան տալիս է պատրաստի գիտելիքներ, որքան խթանում է սովորողների ինքնուրույն որոնումը: Փոխներգործուն տեխնոլոգիաներում ուսուցիչը հանդես է գալիս մի քանի հիմնական դերերով: Նրանցից յուրաքանչյուրում նակազմակերպում է մասնակիցների փոխգործողությունը տեղեկատվական միջավայրի այս կամ այն հատվածի հետ: Իրազեկիչ-փորձագետ դերում ուսուցիչը շարադրում է տեսական նյութը, ցուցադրում տեսաշարքը, պատասխանում մասնակիցների հարցերին, հետևում է գործընթացի արդյունքներին և այլն: Կազմակերպիչ-ֆասիլիտատորի դերում նա կազմակերպում է սովորողների փոխգործակցությունը սոցիալական և ֆիզիկական շրջապատի հետ

(աժանում է խմբերի, խթանում է նրանց ինքնուրույն տվյալների հավաքելը, համաձայնեցնում է առաջադրանքների կատարումը, մինի շնորհանդեսների նախապատրաստումը և այլն): Խորհրդատուի դերում ուսուցիչը դիմում է աշակերտների մասնագիտական փորձին, օգնում է գտնել արդեն ձևակերպված խնդիրների լուծումը, ինքնուրույն ձևակերպել նորերը և այլն: Կազմակերպչի դերի թերություններից է նախապատրաստության ժամանակ ուսուցչի գործի աշխատատարությունը, արդյունքների ճշգրիտ պլանավորման բարդությունը: Փոխներգործուն ռեժիմի ժամանակ արգելքների աղբյուր կարող է լինել ընկալման տարբերությունը, որի պատճառով չի բացառվում իմաստի փոփոխությունը տեղեկատվության ծածկագրման և գաղտնագրման գործընթացներում:

Ներկայացնեմ մի քանի փոխներգործուն տեխնոլոգիաների և մեթոդների, որոնց միջոցով ուսուցման փոխներգործուն մոդելը ներդնել եմ մաթեմատիկայի դասի շրջանակներում՝

- աշխատանք փոքր խմբերում՝ զույգերով, ռոտացիոն եռյակներով, երկու, չորս, միասին,
- կարուսելի մեթոդ,
- դասախոսություններ հիմնախնդրային շարադրանքով,
- էվրիստիկական զրույց,
- դաս-սեմինարներ (բանավեճերի, մտքերի փոխանակության ձևաչափով),
- կոնֆերանսներ,
- գործարար խաղեր,
- մուլտիմեդիայի միջոցների օգտագործում (համակարգչային դասարաններ) լիարժեք համագործակցության տեխնոլոգիա,
- մոդելավորման տեխնոլոգիա կամ նախագծերի մեթոդ (որպես արտադասարանային գործունեություն):

Փորձարարական հետազոտություն

Խմբի նկարագիրը

Փորձարարական հետազոտությունը անցկացվել է Գեղիվիտի թիվ 2 հիմնական դպրոցի 6-րդ դասարանում: Դասարանում սովորում է 20 աշակերտ, դասարանում ունեն աշակերտներ, ովքեր ունեն դժվարություններ ինքնուրույն մտածողության, տրամաբանության հետ կապված: Որոշեցի անցկացնել հետազոտական աշխատանք կիրառելով փոխներգորշուն մեթոդներ, արդյունավետ համագործակցության համար: Առարկան տեղադրված է դասացուցակում 6-րդ ժամին և շարաթական անցնում են 1 դասաժամով:

Փորձարարական դաս 1

Դասը սկսվեց ողջույնի խոսքով, տնային հանձնարարությունների ստուգմամբ և անհասկանալի հարցերի ու դժվարությունների բացահայտմամբ: Դասին ներկա էր 17 աշակերտ, բացակա էին 3-ը:

Հետազոտվող աշակերտները՝ 4 աշակերտ, ներառվեցին կազմված խմբերում և տրվեցին խմբերին հանձնարարություններ՝ ներակայցնել տրամաբանական խնդիրներ և կատարել դասի վերաբերյալ անհասկանալի հարցերի քննարկում: Դասի ավարտին միմյանց հետ խմբում

աշխատելու արդյունքում հետազոտվող աշակերտները կարողացան ներկայացնել դասը, և կատարել համապատասխան առաջադրանքները:

Փորձարարական դաս 2

Դասը սկսվեց ողջույնի խոսքով, տնային հանձնարարությունների ստուգմամբ և անհասկանալի հարցերի ու դժվարությունների բացահայտմամբ: Դասին ներկա էր 16 աշակերտ, բացակա էին 4-ը:

Հետազոտվող աշակերտները՝ 4 աշակերտ, ներառվեցին կազմված խմբերում և տրվեցին խմբերին հանձնարարություններ՝ ներակայացնել տրամաբանական խնդիրներ և կատարել դասի վերաբերյալ անհասկանալի հարցերի քննարկում: Դասի ավարտին միայնց հետ խմբում աշխատելու արդյունքում հետազոտվող աշակերտները կարողացան ներկայացնել դասը, և կատարել համապատասխան առաջադրանքները:

Եզրակացություն

Փոխներգործուն ուսուցման հիմնական նպատակը աշակերտի անձի ամբողջական զարգացումն է: Իսկ անհատի զարգացման միջոցը, որը բացահայտում է նրա ներունակ ներքին ընդունակությունները, ինքնուրույն իմացական և մտավոր գործունեությունն է: Հետևաբար, ուսուցչի խնդիրն է դասի ժամանակ ապահովել այնպիսի գործունեություն, որին նպաստում են ժամանակակից փոխներգործուն տեխնոլոգիաները: Այս դեպքում աշակերտն ինքն է բացում դեպի իմացություն տանող ուղին: Գիտելիքների յուրացումը նրա գործունեության արդյունքն է: Հայրենական հետազոտող մեթոդիստների շրջանում խորանում է ուսուցման այնպիսի մոդելի (նրանց կողմից իդեալական անվանված) ստեղծման անհրաժեշտության գիտակցումը, որում ուսուցման էությունը չի հանգեցվի ոչ սովորողներին պատրաստի գիտելիքների հաղորդմանը, ոչ դժվարությունների ինքնուրույն հաղթահարմանը, ոչ էլ սովորողների սեփական հայտնագործություններին: Նրան մյուսներից տարբերում է դպրոցականի սեփական նախաձեռնության, ինքնուրույնության, ակտիվության հետ մանկավարժական խելամիտ ղեկավարման գուգակցումը: Ուսուցման միայն այդպիսի մոդելը, որը հենվում է իմացական գործունեության նպատակների և դրդապատճառների, ուսուցման մեխանիզմների մասին արդի գիտելիքների ամբողջության վրա, պիտանի կլինի գլխավոր նպատակի՝ անհատի բազմակողմանի և ներդաշնակ զարգացման, իրականացման համար:

Այսպիսով մեր՝ ուսուցիչներին արջն բացվում է գործունեության լայն դաշտ՝ ստեղծագործել, փորձարկել և որոնել ուսուցման իդեալական տարբերակ:

Գրականության Ցանկ

1. <https://multiurok.ru/files/p-okhnergortsown-met-odner.html>
2. Յու. Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան «Մանկավարժություն», Երևան 2005
3. Պետրովսկի «Տարիքային և մանկավարչական հոգեբանություն» Երևան 1977
4. Կ. Դ. Ուշինսկի «Մանկավարժական ընտիր երկեր»
5. ՀՀ Կրթության և գիտության նախարարության հաշվետվություն

**Հավելվածներ
Դասի պլան
Ոսուցիչ՝ Սաֆարյան Ա.**

Առարկան	Աշխարհագրոլթյուն	Ամսաթիվ	Կիսամյակ	1	Դասարան	6
Թեմա՝	ԱՏՐԿԻԱ					
Օգտագործվող նյութեր՝	Աֆրիկայի ֆիզիկական քարտեզ, գլոբոս, ուրվագծային քարտեզներ					
Դասի նպատակը՝	<p>Ճանոթացնել մակերևույթի հիմնական ձևերին, աշխարհագրական դիրքին՝ ըստ օվկիանոսների, գաղափար կազմի մայցամաքի չափերի մասին:</p> <p>Ճանոթացնել Աֆրիկայի ու մտարածված բնական գոտաներին:</p> <p>Գաղափար կազմի Աֆրիկայի ու մտարածված կենդանական աշխարհի մասին:</p>					
Ուսուցման արդյունքները, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						

<p>Վերջնարդյունքները</p>	<p>Օգտվելով թեմատիկ քարտեզներից՝ Իմանա Աֆրիկայի ամենաբարձրը /Կիլիմանջարո/ : Իմանա Աֆրիկայի ամենաբարձր ուղողող օվկիանոսները և ամենամեծ կղզին՝ Մադագասկարը Ներկայացնել Աֆրիկայում տարածված մի քանի կենդանու և բույսի տեսակներ :</p>			
<p>Գործողությունները (Ժամ/տևողություն)</p>	<p>Ուսումնական գործունեություն <i>Աշակերտներ</i></p>	<p>Ուսումնական գործունեություն <i>Ուսուցիչ</i></p>	<p>Հարցադրումներ</p>	<p>Կիրառվող մեթոդ</p>
<p>Խթանման փուլ /3-5 րոպե/</p> <p>Իմաստի ընկալման փուլ /25-30ր/</p>	<p>Աշակերտները վերհիշում են հանձնարարված նյութը, ընդհանուր քննարկում է տեղի ունենում:</p> <p>Բանավոր հարցում՝ 1-2 աշակերտներ կայացնում են հանձնարարված թեման, մնացածները խմբերով աշխատում են քարտեզի հետ, կամ հանձնարարված նյութով: Խմբերում կատարում են քննարկումներ: Պատասխանում են ուսուցչին և դառնկերների հարցերին</p>	<p>Հարցերի միջոցով փորձում է հիշեցնել նախորդ դասերը, ստեղծել կապեր:</p> <p>Լսում է աշակերտներին, ուղորդող հարցերի միջոցով բացահայտում է առկա գիտելիքները և կարողությունները:</p> <p>Ուսուցիչը ներկայացնում է, որ դասը պետք է ուսումնասիրել միմյանց մոտ առաջացած բոլոր անհասկանալի հարցերը քննարկելով և տրամաբանական խնդիրներ կազմելով:</p>	<p>1.Որ մայրցամաքների հետ է սահմանակցում Աֆրիկան 2. Ինչպես է Աֆրիկան բաժանվում եվրասիայից:</p> <p>Ի՞նչ կլինի եթե Աֆրիկայի արևելյան ափերի մոտով դիակայական սառցաբեկոր տեղափոխենք:</p> <p>Աֆրիկայի հյուսիսում բերը կշռել է 5000տոննա իսկ Մումալի թերակղզում 4500: Ինչու :</p> <p>Ի՞նչ տեղի կունենար եթե Աֆրիկայում</p>	<p>Մտադրոհի մեթոդ</p> <p>Բանավոր հարցման մեթոդ</p>

Ավարտ/10ր/	Խմբերը ներկայացնում են իրենց կազմած տրամաբնական հարցերը, և ուղղում դն միմյանց:	Ուսուցիչը կատարում է անկրաժեշտ լրացումներ և հանձնարարում է տնային աշխատանքը:	լինեին շատ բարձր եզրային լեռնաշղթաներ:	
------------	--	--	--	--

Դասի պլան

Ուսուցիչ՝ Ասիկե Ամսոյան

Առարկան	Աշխարհագրություն	Ամսաթիվ	Կիսամյակ	1	Դասարան	6
Թեմա՝	ԱՖՐԿԻԱ կլիման					
Օգտագործվող նյութեր՝	Աֆրիկայի ֆիզիկական քարտեզ, գլոբուս, ուրվագծային քարտեզներ					
Դասի նպատակը՝	Ճանութացնել կլիմայագոյացնող գործոններին: Գաղափար կազմի Աֆրիկայի կլիմայական գոտիների մասին և ծանոթանա Աֆրիկայի խոշոր գետերին ու լճերին:					
Ուսուցման արդյունքները, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						

<p>Վերջնարդյունքները</p>	<p>Օգտվելով թեմատիկ քարտեզներից՝ Թվարկել մեկ կամ երկու կլիմայական գոտիներ և ցույց տաքարտեզի վրա, Աֆրիկայում տարածված երկու անապատ:</p>			
<p>Գործողությունները (Ժամ/տևողություն)</p>	<p>Ուսումնական գործունեություն <i>Աշակերտներ</i></p>	<p>Ուսումնական գործունեություն <i>Ուսուցիչ</i></p>	<p>Հարցադրումներ</p>	<p>Կիրառվող մեթոդ</p>
<p>Խթանման փուլ /3-5 րոպե/</p>	<p>Աշակերտները վերհիշում են հանձնարարված նյութը, ընդհանուր քննարկում է տեղի ունենում:</p>	<p>Հարցերի միջոցով փորձում է հիշեցնել նախորդ դասերը, ստեղծել կապեր;</p>	<p>1.Որ մայրցամաքների հետ է սահմանակցում Աֆրիկայում Աֆրիկան 2. Ինչպես է Աֆրիկան բաժանվում եվրասիայից:</p>	<p>Մտագրոհի մեթոդ</p>
<p>Իմաստի ընկալման փուլ /25-30ր/</p>	<p>Բանավոր հարցում՝ 1-2 աշակերտներ կայացնում են հանձնարարված թեման, մնացածները խմբերով աշխատում են քարտեզի հետ, կամ հանձնարարված նյութով: Խմբերում կատարում են քննարկումներ: Պատասխանում են ուսուցչի և դասընկերների հարցերին</p>	<p>Լսում է աշակերտներին, ուղորդող հարցերի միջոցով բացահայտում է առկա գիտելիքները և կարողությունները: Ուսուցիչը ներկայացնում է, որ դասը պետք է ուսումնասիրել միմյանց մոտ առաջացած բոլոր անհասկանալի հարցերը քննարկելով և տրամաբանական խնդիրներ կազմելով:</p>	<p>Ի՞նչ կլիմա էր Աֆրիկայի արևելյան ափերի մոտով դիակայական սառցաբեկոր տեղափոխենք: Ինչո՞ւ է Աֆրիկան համարվում ամենատաք մայրցամաքը: Ի՞նչով են տարբերվում հիմնական կլիմայական գոտիները անցումային գոտիներից:</p>	<p>Բանավոր հարցման մեթոդ</p>

Ավարտ /10ր/	Խմբերը ներկայացնում են իրենց կազմած տրամաբնական հարցերը, և ուղղում դն միմյանց:	Ուսուցիչը կատարում է անկրաժեշտ լրացումներ և հանձնարարում է տնային աշխատանքը:		
-------------	--	--	--	--

